

10 793

ԱՐՇԱԿ Բ.

ՔԱՏ ԵՐԳՈՒԹԻՒՆ 7 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՍՈՂՈՄՈՆ ԽԱՍԵՑՆ

(Տիվերկցի)

Հասույթին 0/0 50 յաակացուած է Տիվերկի
Աղջկանց Վարժարանին



891.99

Խ-32

Կ. ՊՈԼԻՍ

Բ. Տ. ՏՈՂՐԱՄԱՅԵԱՆ Պապը Ալի ճատէսի Ծիւ 49

1912

2584

9 20590

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Տպագրութիւն :Տ ՏՕԳՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապը Ալի հասէսի բիւ. 49

2003

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԿՈՍՏՈՆԻ	ԿայսրՇուովայեցեաց
ԹԷՍՏՈՆ	Սպարապետ
ՓԷԹԸՐ	Սպասաւոր սպայ
ԱՐՇԱԿ	Արքայ Հայոց
ՎԱՍՍԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ	Ընդ. Սպարապետ Հայոց
ՆԵՐՍԷՍ	ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԱՐԿՊԵՏ	Վերակացու եւ մատակարար
ԲԱԳՈՍ	Զօրավար Հայոց
ՏՐԻԹ.	« եւ հօրեղբորդի Արչակայ
ՎԱՐԳՈՆ	« եղբայր Վակ. Սպարապետի
ՄԱՐԻ	եպիսկ. Հայոց
ՎԱՀԷ եւ ՓԱՅԼԱԿ	Սպասաւոր
ՇԱՊՈՒՀ	Արքայ Պարսից
ՍՈՒՐԷՆ	Սպարապետ Պարսից
ԳՐԱՍԱՄԱՐ.	Վերակացու Շապուհի

ՏԵՍԻՒ Ա.

Պեսք ե Հոովմեական ճաշակով զարդարուած սենեակ մը
(Կոստանդ կայսրը առանձին)

Ես «կայսրս» հոովմեայական մեծ պետութիւն, ճգեցի մեծն Բիւզանդիոնը «ծովերու թագուհին» Վոսփորի զւարթ երկինքը վեղազուարճ ափերը :

Պնտոսի հզօր պետութեան յաղթեցի . փոքր Ասիոյ մէջ գտնուած այնքանի ազգերը նուաճելու կարող եղայ . այժմ կը գտնուիմ Կեսարիա Կապադովկիայի մայրաքաղաքը .

Կեսարիա՛ հին հոովմայական քաղաք՝ լեցուն այնքանի սուրբ յիշատակներով նուիրական գործերով: Այո՛, հօրս Մեծն Կոստանդիանոսի պետութիւնն պէտք է ընդարձակեմ . պէտք է անոր վահին արժանաւոր յաջորդ մը գտնամ, Հայոստանն ալ պէտք է նուաճեմ կամ Արշակայ հետ բարեկամանամ :

Արշա՛կը, յանգուզն Արշակը, Արմենիստանի ներկայ նորապսակ արքան, որուն բարեկամութիւնը եթէ կորուսանեմ, կրնամ մեծապէս վնասուիլ. կրնայ ըլլալ, « վ գիտէ, իմ յաղթութիւններս բոլորն ալ անպսակ մընան եւ գուցէ՛, գուցէ՛ . . .

Պէտք է զանգակը հնչեցնէ . —

(Փիղրոս անունով ծառան ներս կը ներկայանայ)

Կոս . Փիարոս ներս կանչէ Թէոսոս հրամանատար :

(Թէոսոս խնարանկով)

Կոս . — Թէո՛սոս, քա՛ջ հրամանատար, ա՛հա կը տղնուինք Հայաստանի աահմանին վրայ, պէտք է մեր գիրքերը որոշենք, գուցէ արիւնալից կուռի մը նախորեակին գտնուինք :

Թեոսք . — Այո՛, հզօր կայսր . Հայոց ազգին կռիւը շատ սոսկալի է . հոռովմայական պատմութեան մէջ դեռ թարմ է . Արտաշի ըրած քաջագործութիւնները . հոռովմէական լէզէոններ շատ անգամ բազդը ունեցած են այս ազգին հետ կռուելու . այո՛, բազմիցս յաղթած ենք բայց չենք կրցած հուաճել, յուսամք, այժմ մեծ Արքայ, շնորհիւ Յիսուսի պիտի կրնամք յաղթել Հայոց . խրոխտ Արշակայ դուրս պիտի դնեմ պատուանգանիդ առջեւ եւ հայերու աննման վաղարշապատը հոռովմայական մեծ պետութեան արքային առջեւ պիտի իյնայ . պսպղուն թագաւոր վրայ դեղեցիկ աղամամանդ մըն ալ պիտի աւելնայ Հայաստանով :

Կոս . — Ո՛հ, աննման մեծայաղթ զօրավարս, երանի թէ երկինք տար ինձ այդ . բայց գիտցիր թէ Արշակ եթէ անգամ մը Պարսից կողմը գառնայ այլ եւս անկարելի կ'ըլլայ Շապուհի հետ կռուիլը, մեր ծովէն անդին ունեցած երկիրներու մէկ մասը կամ բոլորը գուցէ կորսնցնենք՝ անհրաժեշտ է ձեռք ձգել Արշակայ բարեկամութիւնը .

Գիտցիր թէ ասոնք քրիստոնեայ ժողովուրդ են եւ մեր հօր Մեծն Կոստանդիանոսի օրերէն այնքանի սուրբ յիշատակներով մեզի կապուած՝ յիշէ Մեծն Տրդատի օրերը քանի քանի անգամներ Հայոց զօրքերը ուսընդուս կըսուած են հոռովմէական լէզէոններու հետ արիւն արեան հետ խառնած եւ այսօր ի՛նչ կ'ըսես, թէոտոս, կորսնցնենք մեր այնքան հին բարեկամութիւնը, այսքան քրիստոնեաներու արիւնի հեղման պատճառ ըլլանք :

Ո՛հ, ո՛հ, Յիսուսի մեծ եւ անմահ թագաւորին անունով կ'ըսեմ ոչ, պէտք է դարձեալ ձեռք բերել Հայոց բարեկամութիւնը :

Թեոսք . — Վեհափառ արքայ, ճշմարիտ է այդ բոլորը որ կ'ըսէք, սակայն այն օրէն որ գահ ելաւ Արշակ, գաղթեցուց այն մասնաւոր հարկը որ կը վճարէին

հայերը: Շապուհի հետ այժմ մեծ բարեկամութիւն ունի, թերեւս մտադիր է բոլորովին անկախ հռչակել Հայոց իշխանութիւնը :

Կոս . — Այո՛ քաջ թէոտոս, Արշակ գաղթեցուց հարկը, բայց դրամի համար կարժէ՞ մեծ եւ միանգամայն կասկածելի կռիւ մը մղել . իսկ գալով Պարսից բարեկամութեան կարելի՞ է որ Հայք վստահին :

Շապուհի հայրը՝ Յազկերտ չէ՞ր որ իբր բարեկամ իր մօտ կանչեց Արշակին հայրը՝ Տիրանը եւ երկու աչքերը կուրցուց եւ որն որ այժմ կը գտնուի Հայաստանի վանքերուն մէջ :

Ո՛հ կարելի է որ Հայերը մոռնան այսքան նախատինք : Հայոց վրէժխնդրութենէն վախնալով չէ՞ր որ Շապուհ Տիրանի որդին՝ Արշակը՝ թագաւորեցուց արքայական թագ կապելով անոր գլխին :

Թեոսք . — Ուրեմն, ի՛նչ է ձեր կամքը .
Կոս . Ըստ իս լաւ կ'ըլլայ կանչէք քարտուղարը ու նամակով մը յիշեցնենք Հայոց կաթողիկոս Ներսէս Մեծի՝ եւ Հայոց արքային մեր հին բարեկամութիւնները եւ պետութեան ունեցած պարտքերնին եւ հրաւիրենք զիրենք նոր գաշնադրութեան մը :

Թեոսք . — Ներս կանչեցէք քարտուղարը
(Քարտուղարը պե՛հ է գրե՛)

Մեծագօր ինքնակալէն Մեծն Կոստանդ կայսերէ եւ հոռովմէական տիեզերական պետութենէն ողջոյն շատ առ .

Սիրելի ես հզօր արքայն Հայոց Արշակայ երրորդի եւ Վեհ . Կաթողիկոսի Ներսէս Մեծի եւ համօրէն նախարարաց եւ Արմենիստանի Քրիստոսասէր բոլոր ժողովուրդներուն :

Գիտէ ձեր արքայական մեծութիւնը ինչպէս նաեւ Վեհ Սրբութիւնը Հայոց Հայրապետին՝ թէ երկար տարիներէ ի վեր ինչքան մեծ բարութիւններ վայելած է

Հայոց սիրեցեալ ազգը հռովմէական բազմաթիւ պետութեան քով, յաճախ մեր կայսերական լէպէտները ուս ընդ ուս կուտած են Հայոց զօրաց հետ պարսկական անթիւ զօրաց ընդդէմ. թող յիշէ Հայոց ազգը իրենց նախահօր Ս. Տրդատայ եւ այլ նախահօր հռովմայական զօրքերով իրենց իշխանական թագին տիրանալը բացէք ձեր ազգային յիշատակարանները եւ պիտի գտնէք զայն լեցուն մեր բազմաթիւ պետութեան յիշատակներովն ու բարեքներովը :

Ուստի սոյն արքայական նամակաւ պիտի յանձնարարէինք ձեզ անցեալ տարիներու տուրքերը եւս միատեղ առած գայիք ի կեսարիայ ուր մեր մեծայաղթ բանակը Պոնտոսը եւ բոլորփոքր Ասիան ուտաճած եկած բնասկած է :

Մեծ հաւատք ունենալով ձեր վեհ հանճարեղ արքայիդ եւ գերերջանիկ հայրապետիդ իմաստութեան վրայ մ'օտոյ ձեր տեսութեան կը փափազէինք :

Կնիք կայսերական

Բ. ՏԵՍԻԼ

(Հայկական ճաշիկով պարսաստան գահին մը)

Արեակ առանձինն

Դեռ նոր վերադարձայ Տեղբոնէ : Արքայից արքային Շապուհի մեզ ցոյց տուած բարեկամութիւնը իրապէս գնահատելի էր :

Մի կ'ըսէր թէ այսքան մտերմական պիտի ըլլար մեր խօսակցութիւնը. եւ երբեմնի հօրս Տիրանայ աչքերը կենդանուն հանող Շապուհը այսքան բարեկամ պիտի գտնար մեր երկրին .

Զարմանալի . սակայն ինչպէս կարելի է մոռնալ այն տարօրինակ գէպքը որ եկաւ աչքիս շատ վեր բարձրացնելու Շապուհը . Միհրի իրական պատկերը, եւ վեհ թագաւոր մը ճանչնալ ինքը . ո՛հ Աստուած իմ կարելի է խաբուած ըլլալ :

(Պե՛ս Է առջեւի զանգակը հեղեղնէ)

(Վահե անունով սպասաւորը ներս կուգայ)

Արշ. Վահէ հոս կանչէ ընդհ. սպարապետը :
(Սպարապետը ներս կը մտնէ խնարհեղով):

Արշ. մեծայաղթ սպարապետս,
Արդեօք որքա՞ն իրական էր այն անցքը որ սլառահեցաւ Պարսից արքունիքին մէջ, երբ ուզեցինք այցելել ձիերերու գարմանատունը :

Վոկ. — Բոլորովին իրական :

Արշ. — Սպարապետս, պատմեցէք անգամ մըն ալ, մեծ հաճոյք կ'ըզգամ զայն ստէպ լսել :

Վոկ. Վեհ. Արքայ, ի Տիրքոնս երբ ձեր հետ միասին ձիերու այցելել ուզեցինք այստապետը փոխան ձեր արքայական վեհափառութեան, արժանեաց համաձայն կ'ձեզ պատուելու՝ Հայոց այժերու թագաւոր կոչեց զձեզ, այս անարգալից պատասխանը սուրէ մը աւելի խոցեց սիրտս, պա՛հ մը մոռցայ թէ ուր էինք, ցատկեցի կատրած առիճի մը պէն, մագերէն քաշելով ձեր ստից առջեւ վատին գլուխը կտրեցի :

Շապուհ իրազեկ եղաւ ինդրոյն, գովեց զիս եւ ըսաւ . Վասակ երանի թագաւորիդ որ քեզի պէս թիկնապահներ ունի . քաջդ Վասակ ատկէց շատ աւելի շնորհներու արժանի ես դուն .

Կեցցէ Մամիկոնեաններու մեծ տոհմը :

(Այդ միջոցին պե՛ս Է Բագոս ներս մտնէ)

Բագ. — Վեհ. Արքայ Հայաստանի արեւմտեան կողմը՝ մեծ եռուղեր մը սկսած է. Յունաց կոստանդ կայսրը անհամար զօրքերու գլուխ անցած՝ Հայաստանի սահմանակից բոլոր երկիրները գրեթէ գրաւած է. Պոնտոսի մեծ թագաւորութիւնը ինկաւ . թէ ոգոս մեծ զօրավարը

*աշեղ պատրաստութիւններով կապագովկիայէն անդին
գորքերով սկսած է լեցնել :*

Մեր զինուորներու մեծ շարք մը բռնած է Սերաստիոյ սահմաններէն անդին , Հայ քաջերու զորահանդէսով մը ցոյց տուի հասովայեցոց թէ հասարակ թշնամիներու հետ չէ գործեցնին: Բարձր լեռներու կատարները եւ ռազմական բոլոր կարեւոր դիրքերը ամրացնել հրամայեցի: Այժմ իբր լրտես հասովայեցի մէկը բռնած ենք . սուրյի հազուստ կը կրէ . սնմիջապէս կտոր կտոր պիտի ընէի զինքը բայց խնդրեց որ ձեզ մօտ բերեմ: «Լրաբեր եմ» կըսէ եւ կը խնդրէ որ անձամբ ներկայանայ ձեր արքայական մեծապատուութեան կամ նորին Վեհ. Սրբութիւն ի՞նչ կը հրամայէ :

Արց. — Քաջ զորավարս , զինքը հոս բերէք :

(Սուրերով շրջապսսած գիւնիր ներս բերեն)

Փեք. — Վեհ. Արքայ . հասովայեցի զինուոր եմ . կերարիայէն կուգամ , յատկապէս նորին կայսրութեան Մեծն կոստանդ արքայէ նամակ ունիմ :

Փիսրոն նամակը կերկարէ)

(Քարսուղարը կը կարդայ Հայրապետի ներկայութեան)

Արց. — Կանչեցէք Վեհափառը :

Ներ. — Այս հասովեական պետութեան բարիքները յաճախ վայելած է մեր ազգը . Դիտկիտեանոս կայսրը բազմաթիւ զորքերու օգնութիւնով Արտաշիր արքայի զորագունդերու յաղթելով ի գահ բարձրացուց Տրդատը եւ դեռ ուրիշ շատ օգնութիւններ :

Արց. — Վեհ. Չեր հետ ունենալով աւագ նախարարներէն Սուրէն Արծրունին , անձամբ կը ներկայանաք նորին կայսերական Վեհափառութեան պատշաճ ընծայներով հարկ եղած դաշնագրութիւնը ի գլուխ կը հանէք :

Վսկ. — Արքայ , թէ կարելի է միանգամ յիշեցէք

Շապուհի հետ ունեցած մեր հին բարեկամութիւնը . ըլլալ թէ մեր կայսեր հետ ունենալիք ո եւ է մերձաւորութեան առիթ տան թշնամանալու Արքայից Արքային հետ , եւ մենք գտնուինք երկար եւ արիւնալի կուռի մը առջեւ :

Արց. — Բազմայաղթ սպարապետս , ահա ինչպէս Բագոս ձեր եղբայրը կը հաստատէ , թէ ողոս անհամար զորքերով եւ աշեղ պատրաստութիւններով կը գտնուի Սերաստիոյ սահմանին վրայ , ո եւ է թշնամական փոքր պատուակի մը՝ գուցէ հասովայական լէգէոններ արշաւած պիտի ըլլան մեր երկիրը , Շապուհ մը պիտի մընայ մեղի օգնութեան համեմուտ , եւ թերեւս մենք յաղթուինք . արդէն մէկ քանի Հայ նախարարութիւններ սկսած են վէճեր ունենալ իրարու մէջ , որով մենք անկարող պիտի ըլլանք Հայոց բոլոր զորութիւններն ի մի հաւաքելու :

Վսկ. — Ո՛հ այդ սոսկալի է Վեհ. Արքայ . ձեր հօր Տիրանի օրով նախարարներու վէճն դեռ թարմ է մտքիս մէջ , ձեր հայրն Արարատեան գնդով երկու նախարարութիւններ բոլորովին սրէ անցուց երբ անանք չուզեցին ուշ դնել մեծ արքայի միջնորդութիւն :

Ասկ. — Ուրեմն սիրելի սպարապետս չառ լաւ ըրած պիտի ըլլանք էթէ առանց ժամանակ կորսնցնելու փութով ճամբայ ելլեն վեհափառը նախարարներով , գուցէ վերջոյ ուշ եղած ըլլայ եւ մենք զղջացած ըլլանք :

(Անոնք կը մեկնին)

Արց. — Մեծայաղթ սպարապետս , այժմ կերթանք գուք Արարատի բոլոր զորագունդերը ինչպէս նաեւ այր ու կին կազմ ու պատրաստ վիճակի մէջ կը դնէք , նախարարութիւններու առանձին առանձին կը տեղեկացնեք որ պատրաստ ըլլան :

Միւնեաց Անտովը իշխանին որ Տիգրանակերտի ամրացման համար բոլոր պէտք եղած պիտոյքները հոգայ ,

Ինչպէս նաեւ Արծրունեան Շաւառայ իշխանին որ վաստակաւոր աշխարհին մէջ պատրաստ ըլլայ : Երեսնէս կամսարականին որ կը վարէ այժմ ընդհանուր հրամանատարութիւնը Մոկայ աշխարհի :

(Վասակ կը մեկնի)

(Արշակ առ Բագոս ուղղորդով)

Դո՛ւ , Բագո՛ս , ամենասիրելի հրամանատար կերթաս փութով ձեր զօրագունդերու վրայ , կը խորհիմ թէ կայսեր հետ մեր բարեկամութիւնը կարելի պիտի ըլլայ նորոգել , բայց չի գիտեմ թէ Շապուհի հետ ինչ գործ պիտի ունենանք . ապագան խիստ աղետալի կերեւայ... :

Բագ . — Մ՛յ , ո՛չ , հանճարեզ վեհանճն եւ քաջ արքայ Հայ զինուորներն պատրաստ են իրենց արեան մինչեւ վերջին կաթիլը գոհել Հայաստանի եւ Արշակունի թագին սիրուն :

Բագոս կ'ընտրէ մեռնիլ քան մեր արքային արամութիւնը տեսնել :

Արշ . — Յաւիտեան ապրիս Բագո՛ս , քանի Հայաստան ունի քեզ պէս զօրավարներ պիտի չը մեռնի , Լուսաւորչի Աստուածը թող քեզի պաշտպան ըլլայ եւ Հայաստանի ապուէն :

(Արշակ պիտի ե իյնայ արողին վրայ)

Տխուր երգ մը պիտի երգուի

Արշակ ոսփի ելլելով

Արշ . — Մ՛հ այս ինչ սեւ ձակատագիր է որ կ'սպառնայ տակաւ Հայաստանի . ի՛նչ դժբախտութիւն . երկու հսկաներ ափ են առած հայրենիքի կրկին կողմերը . ներգրեւանդինը արեւմուտքէն եւ դրուժան Պարսիկը արեւելքէն , կրկին սուրբու մէջ ես դժբախտ երկիր . իսկ քու սննաման զաւակները , երբեմնի քեզ պարծանք

եղող նախարարներ նախաթոռ ըլլալու մարմաչէն բարձի թողի ըրած են հայրենիքի պաշտպանութեան մեծ հարցը .

Անորէն , Պարսիկ , գիտցիր վաղարշակի ծնունդը , Արշակունի Արշակը վատ չէ . Արշակունիները վատեր չեն արտագրած դեռ .

Պապա . — Դո՛ւ Արշա՛կ Արշա՛կ , հզօր Արամագտայ օգնութիւնով ինչէր գործեցիր , Կապագովիան , Գաղատիան , ամբողջ Պոնտոսը թնտաց ոտքիդ սակ , ժայռեր չի կրցին հանդուրժել նիզակիս ուժգին հարուածին , քու արձանը կանգնուեցաւ Սեւ ծովի եզերքին , քաջեր եկան երկրպագել քեզ :

Արշա՛կ , Արշա՛կ , դիւցազուն պապա , երբ տուիր ինձ Արշակունի զինուորներն եւ դիւցազուն նախարարները . է՛ր չը տուիր անոնց հոգին եւս անոնց .

Լուսաւորչի Աստուածը կամ դու ալ Արամագտայ շանթը տուր ինձ շանթահարելու , մրկելու կրկին առիւծներու գլուխները , կամ դու անցիր մեր երկինքներէն՝ որպէս զի փոխան խոնարհ Յիսուսիդ կանչենք օգնութեան մեզի մեր դիւցազուն Աստուածները :

(Վահե ներս մտնելով)

Վահ . — Տէր Արքայ , Մարպտան ձեզ տեսնել կը փափաքի :

Արշ . — Ըսէ որ ներս գայ :

Մարգ . — Վեհ . Արքայ ձեր հրամանաց համաձայն , կատարեցինք մանրամասն քննութիւն բոլոր այն կառուածներուն որոնցմով եկեղեցականները եկեղեցիները կը կառավարէն , ճամբաներու վրայ շինած մեծամեծ հիւրանոցներ որոնց մէջ հազարաւոր ծոյլեր բուն դրած կ'ապրին ի վնաս արքունի գանձին , կուտանոցներ , ճրգնարաններ բազմաթիւ են :

Այսպիսի հիանալի տեսարաններ ունեցող կալուածներ ունին՝ եկեղեցական Քրիստոսի փոխանորդ կանչուող

այն սեւազգեստներն , որոնք երբ անձամբ տեսնէ ձեր վեհափառութիւնը ափ ի բերանս պիտի մ'նայ :

Սրբավայր կոչուած այս գեղեցիկ վայրերու մէջ ամէն անորէնութիւն կը գործուին , չը գիտեմ ի՛նչ կը խորհի ձեր արքայական վեհափառութիւնը :

Արե . — Եւ ես չը գիտեմ՝ այս ինչ մոլութիւն է որ տակաւ սկսած է աճիլ Հայոց մէջ , այս սեւզգեստաւորներ քանի քանի առոյգ երիտասարդներ դրին կնգուղի տակ եւ խամրեցին :

Եթէ մեր հօր Տրդատայ պէս անպարտելի թագաւորի բոլոր հայրենասիրական ջիղերը կտրեցին եւ անասնական վիճակի ենթարկեցին , լեռները իյնող խոտաճարակի մը , որ հայրենիքի բիւրաւոր որդիներու կեանքը ոչինչ սեպեց , լքեց ամբողջ Հայաստանը վրկեյու համար միմիայն իր կեանքը , ո՛հ անձնասիրական այս ինչ վատ զգացում է որ տակաւ կ'ընթանայ :

Սիրելի Մարգարէտ գնաց քեզ հետ անտէրով Գուգաւրաց իշխանը եւ մաս մը զօրք :

Փակէ հիւրանոց ըսուած ծուլանոցները .

Փակէ կուսանոցները .

Փակէ ճգնարանները .

Արտաքսէ վանքերու մէջ կուտակուող միաբանները , այն ամէն կոյսերը ու արեղաները որոնք սիրահարութիւններ ունին գաղանի կամ առ աչօք աժուանացուր , զանոնց ծախքը հոգալով արքունեաց մտուկէն :

Ընդարձակ վարելու հող ունեցող մենաստան գիւղերու փոխարկէ , նոր ամուսնացողներու ճրի հողեր տուր , պետութեան կալուածներէ . վերջապէս թմբուկն ու տաւիղը որ պահ մը պէտք է թագաւորէ թագաւորութեանս բոլոր սահմաններուն մէջ փոխան Սաղմոսի .

Ու տարի մը վերջ նոր նէր օրօրներն պէտք է երգուին օրօրոցի մամիկներէն :

Քանի կաթողիկոսն հեռի է աշխարհէն պէտք է ամէն

ինչ կարգադրէ եւ շուտով , վերջե մի գուցէ դժուար կ'ըլլայ :

Նմանապէս ամենասիրելի Մարգարէտ Արարատի միւս կողքին ընդարձակ անասաներու մէջ ձեռնարկած եմ՝ շինելու քաղաք մը Աշակուան անունով , որպէս զի պարսկական տաւրազմի ո եւ է հաւանականութեան իբր պարսպ ծառայէ եւ կուսի Մասիսի կողքին սրով ժամանակ շահինք մ'ընչեւ պատրաստելու մեր զօրագուցերը :

Քաջը իմ Մարգարէտ Հայաստան աշխարհի բոլոր քաղաքներու եւ գիւղերու մէջ հետեալ կերպով մուտնտիկ կանչել տուր :

Ամէն կարգի յանցաւորներ ինչ յանցանք ալ ունենան եթէ մի՛նչ երեք ամիս Արշակուան կարենան փաղջիլ ազատ պիտի ըլլան իրենց պատիժէ մը վերջ :

(Վարագուրը փակել երգե մը վերջ :)

Վարագուրի ետեւէն հետեւեալը ձայնի

Մեր մեծայաղթ Արշակ Արքան հետեւեալ կարենաւոր ազգարարութիւնը ունի .

Հայրենիքի ամէն տեսակ յանցաւորներ գողեր՝ շնացողներ՝ ոճրագործներ՝ եթէ փախչելով կապաստանին Արշակուան ազատ կըլլան իրենց յանցանքէն երեք ամիս պայմանաժամ արուած է . օգտուեցէք այս բացառիկ պատեհութենէն :

Վարդ. Ծառայ եմ Վեհ. կըսէ եւ կը մեկնի .

Վահե Գեո մտնելով

Վահե. Պարսկաստանէն համակ ունիք .

Կերկարէ , ս'կսի Արեակ կարգալ նամասը

Շապուհ Արքայից Արքայէ ողջոյն շատ առ սիրելի սերլի Արքայն Հայոց եւ ամենայն հաւատ ժողովրդցո Արմենիստանի :

Յայտնի ըլլայ ձեզ որ ձեր Տեղբոն եղած միջոցին

միջոցին ի ներկայութեան Մարի եպիսկոպոսի, եւ վասակ Մամիկոնեան ստարապետի երդուեցանք յանուն ձեր պաշտօնի Աստուծոյ մշտապէս պահել մեր հետ բարեկամութիւնը եւ վայելել մեր Միհրի Արեգնափայլ Աստուծոյ բոլոր շնորհները :

Արդ վերջին մեր առած տեղեկութիւններուն հայելով ներսէս կաթողիկոսի միջոցաւ բարեկամանալ սկսած էք հոստանդ կայսեր հետ . հռովմէական նենգութիւնն բացայայտ ըլլալով . յուամիրական չեն , փութով կ'սպասեմք ձեր տեղեկութիւններու , յուսամ ձեր հանճարեղ վեհախառութիւնը պիտի ուզէ այնպիսի ընթացքի մը հետեւիլ որ մեզ Աստուածային պետութեան եւ ձեր աշխարհի միազամայն օգտակար պիտի ըլլայ :

Շապուհ Արքայից Արքայ

Արե . վահէ՛ ներս կանչեցէք ընդհ . սպարապետս .

(Սպարապետը ներս կը մտնէ)


Արե . Սիրելի սպարապետ ինչ լուր ունիք Հայոց կաթողիկոսի պատգամաւորութեան :

Սպար . Հայոց կաթողիկոսը տառցած է եւ մ'օտ օրերէն կ'սպասուի անդս . բանակցութիւնը շատ յաջող անցած է թէեւ տոխուներ է Հայոց հայրապետը մինչեւ Պոլիս երթալ որովհետեւ կայսրը Բիզանդիոն գնացած է եղեր :

Կոստանտ կայսրը շատ սիրով ընդունած է Հայոց պատգամաւորութիւնը եւ ընծաները :

Չեր հօր Տիրան արքայի օրէն տրուած պատանդներէն Չեր հօրեղբայրը Տրտադ սպանուած է որն որ արգէն գիտէք իսկ անոր որդին Տիրիթ եւ ուրիշ բոլոր թագաւորներն եւ գեղեցիկ կոյս մը կայսերազն Սիմպիատայ անուն ձեզ կնութեան բերած է նախկին թագուհւոյն Համազասպուի տեղ :

Արե . Ուրախ եմ բազմայողթ սպարապետս կերեւայ



որ վնհ . կաթողիկոսը անձնական հաճոյիցս եւ երջանկութեան մասին եւս կը խորհի :

Վսկ . — Ախ թէ բարի գտնուէր երիտասարդ արեղայններու մասին եւս խորհիլ ուզէր :

Վսկ . — Ճշմարիտ է վեհ . Արքայ կը մաղթեմ որ ձեր այդ ուրիշները երջանկացնելու մասին ունեցած փափաքը կատարած տեսնէիք :

Արե . — Արքայից արքայէ Շապուհէ եւս համակ ունիմք կը փափաքիմ որ կարգաք :

(Արշակ կերկարէ վասակը կարդայ, կարդալը ընկնեցի վերջ)

Վսկ . — Վեհ . Արքայ մեր կասկածները Շապուհի Արքայից Արքային նկատմամբ կսխսին իրականութեան փոխուիլ :

Արե . — Ճշմարիտ է . ինչ կը խորհիք այժմ ամենասիրելի սպարապետս :

Վսկ . — Խաղաղութիւնը ունենալու համար պատերազմի միշտ պատրաստ վիճակ մը ունենալու ենք :

Արե . — Բայց պէտք չէ որ Շապուհ վատահայտներ թէ մեր կայսեր հետ ունեցած բարեկամութիւնը երբէք իր հետ թշնամութիւն չի նշանակէր եւ թէ մենք իբր Արշակունիներ ազգակցապէս եւ թէ պատմականօրէն Պարսից հետ բարեկամ ենք . բայց իս լաւ պիտի ըլլայ եթէ մեր հօրեղբորորդին Տիրիթ եւ ձեր եղբայրը վարդան Մամիկոնեան ընծաներով ղրկենք Արքայից Արքային մեր ինքնագիր համակներով :

Վահն . — Հոս կանչէ վարդ Մամիկոնեան եւ Արշակունին Տիրիթ :

Արե . — Տիրիթ սիրելի հօրեղբորորդիս քու հետ եւս աւանդով վարդան Մամիկոնեան պիտի մեկնիս շուտով Պարսկաստան ներկայանալու Արքայից Արքային . Չեր առաքելութիւնը մեծ է . ձեր քաղցր վարմունքէն եւ

1001
8161

իմանտուն խօսակցութենէն կախում ունի այժմ մեր ազգի ապագան, դուք սիրելի հրամանատարներ, պիտի լինիք ազգին յոյսը, այնպիսի վտանգաւոր քաղաքականութենէ փրկելով մեր ազգը:

Ա. յո', Տէր Վեհ. խիստ վտանգաւոր է երբ ես պատանդ էի Բիւզանդիոն հոռովէական խիստ հակակրօթիւն մը կար Պարսից նկատմամբ:

Վարդ. — Այս երկու հսկաներ անշուշտ պիտի բաղխին իրարու Վեհ. Արքայ, այժմ մեր վրայ դրուած պատասխանատուութիւնը խիստ մեծ է, երանի թէ յաջողէինք:

Արե. — Լուսաւորչի Աստուածը թող առաջնորդէ ձեզի եւ Հայոց ազգի զօրավիգը ըլլայ:

Գ. ՏԵՍԻՆ

(Ներհայացնել Պարսից արհուլիքը ուր Շապուհ լուսավորչի զորքը փառաւոր գանձի մը վրայ, արհայական ծիրանին հագած. իսկ մեկուսի կայնած Ներսէս սպասաւորն)

Շապ. — Ներսէս ներս կանչեցէք սպասաւորը:

(Սուրեն խոնարհելով)

Շապ. — Հայաստանէն ի՞նչ լուր ունիք:

Սուր. — Դեռ լուր չառինք, բայց մօտ օրերս կ'սպասուի:

Շապ. — Քաջ սպարապետս, թէ՛ ստոս իր զօրքերով մինչեւ Հայոց սահմանները արշաւելը որոշ է, ինչպէս նաեւ Հայոց հայրապետին միջոցաւ Արշակ արքային հետ

բարեկամանալը, Սուրէն չը գիտեմ ի՞նչ ընել պէտք է այս անիծեալ ազգին հետ:

Սուր. — Արեգակնափայլ արքայ, ես կը կարծէի թէ այլ եւս Արշակի հետ մեր ունեցած բարեկամութիւնը մշտակայ պիտի ըլլայ, ինչու որ դեռ հոս պատանդ կ'ըսպասէ Ռշտունեաց Մարի եպիսկոպոսը որն որ երգում տուաւ Հայոց արքային խաչի եւ Աւետարանի վրայ:

Շապ. Հոս բերենք եպիսկոպոսը:

(Մարի կը բերուի)

Արե. — Յարգ. եպիսկոպոս, այս ի՞նչ ընթացք է որ կը հետեւի ձեր արքան՝ Մարի ձեր ներկայութեան չէ՞ր որ երբ Արշակայ ծիրանի եւ արքայական թագ պարգեւեցի երգուեցաւ նա Յիոուսի անունով հաւատարիմ մնալ պարսկական գահին, եւ այժմ դեռ թաց այն թուղթը որն որ կնքեց արքայական մասնիով: Իսկ հիմայ, կարծեմ դրժած է իր երգման, արդեօք սուտ երգում տուի՞ր Մարի եւ այն գիրքը որուն վրայ երգուեցաւ Աւետարան չէ՞ր:

Մարի. — Ոչ Վեհ. եւ արեգնափայլ արքայ, երբէք չի ներեր մեր կրօնը այդգիսի կեղծ քաղաքականութեան մը եւ եթէ Արշակ դրժեց իր երգման, գիտցիր վեհափառ այդ երգումը կրնայ յետս ձեզի բերել զինքը:

Շապ. Այդ անիծեալ կրօնն է Մարի որ զիս խնդրեց եւ ես ձեռքէ հանցի Արշակը, Ա. յո', իմ ըրած մեծամեծ բարիքներս ուրից տակ կ'ստացեց, այո', զի արքային դրժեց իր խօսման եւ բարեկամացաւ ինչպէս որ հետ. չը գիտեմ այլ եւս թէ ձեր ո՞ր խօսքին պիտի ընտանան պէտք է վստահիլ:

Մարի. — Հոս մեծն Մեհրի Աստուծոյ անունով կ'երգուում, պիտի խնդրեմ Արշակայ խաբէութեան վրէժը սահմանիս մէջ եղող քրիստոնեաներէ. դու

իսկ Մարի արեանդ գնով պիտի հասուցանես իմ վրէժ-
խընդբուծիւնս, իսկ դու դրուժան Արշակ դու եւ քու
հախարարները պիտի չի կրնան ազատել իմ վրէժի փայ-
լակներէս: Եւ դու Սուրէն շուա դուրս հանէ իմ հեր-
կայութենէս սա անիծեալ կղերը, միանգամայն հրաման
արձակէ որ սահմանիս մէջ եղող քրիստոնեաները կոտու-
րեն ոչ ոք պէտք չէ ազատի, Սարգիս գորավարը որ մե-
ծամեծ քաջութիւններ գործած է պէտք է հաեւս իր
որդւոյն Մարտիրոսի հետ կամ դառնայ դա՛ խաբեբա-
յական կրօնէն կամ պէտք է մեռնի, որովհետեւ քաջեր
արտադրելու կրօն չէ այդ:

Քաջ եւ սիրելի սպարապետս միանգամայն կազմէ՛
պատրաստէ ամբողջ հեծելազօրքը եւ հետեւակ զինուոր-
ները՝ Հոգկաստանի սահմաններէն մինչեւ Կովկաս, Սև
լանները, Վրացիները, Ափխազները: բոլոր հարատակ-
ներէ մեծ գորագունդ մը կազմակերպէ, որովհետեւ
ուղղակի կայսեր հետ պէտք է գործ ունենանք՝ հասկը-
ցնելու կոտորիկի թէ Շապուհ Արքայից Արքան կապրի
եւ Միհր արեգալինափայլ Աստուածը մեծ խաչի վրայ
գամուղ հրեայ Աստուածէն անհունս մեծ է. պարսկական
Ասիւնը պէտք է փողոտէ հազմէայական արծիւր, Ար-
շակ տեսնէ իր յուսացած լէզէմներու վիճակը: Տեսնէ
Հայաստան արիւնջուա ձեռքերնուս մէջ եւ նայինք ով
է որ պիտի ազատէ զինքը:

Մարի. — Այո՛ եթէ Արշակ դրժեց պէտք է խմէ իր
ըրած չար գործերու բաժակը. բայց ի՛նչ մեղք կրնան
ուսենալ քրիստոնեաները:

Յուր. — Լու է չէ պէտք Արքայից Արքային հետ խօսիլ
առանց հրամանի:

Շապ. — Եւս թող գործադրուի հրամանս:

(Մարիև պեճ է դուրս հանել)

(Շապուհ առանձինն)

Շահ. — Հիմայ թող գայ Բիւզանդիոնի կայսրը եւ
խաջուած Յիսուսը ու ազատէ իրենց յուսացած սա քրիս-
տոնեաները սուրի հախճիրներէն:

Քիչ մը մտախոհ կենալէ ետ

Ներս. — Հայաստանէն պատգամաւորութիւն եկած է
եւ ձեր արքայական վեհափառութեան տեսնել կուզէ:

(Պեճ է ներկայացնել Տիրիթ եւ Վարդան)

(Երկուսոյ պեճ է հանքուրեկ Շապուհի իղանցի)

Տիր. — Նորին վեհափառութիւն արքայն Հայոց շատ
սիրալիք բարեւներ կը նուիրէ Արքայից Արքային եւ կը
ինդրէ բարձեալ Միհր Աստուծմէ երջանիկ կեանք մեր
վեհ՝ Արեգալինափայլ արքային, փառք, սնասման բա-
րելուութիւն իրանի համայն ժողովրդոց:

(Տիրիթ նամակը կ'երկարէ)

Շապ. — Դպրապետը կանչեցէք Ներսէհ, հաեւ սպա-
րապետը:

Շապ. — Դպրապետ առ համակը եւ կարգայ:

(Սպարապետին նստելն վերջ դպրապետը պիտի սկսի կատար)

Արշակ Բ. Թագաւոր Հայոց եւ հախարարներ Հայկազ-
եան զարմի եւ հանուր ժողովուրդն Հայաստանի, ունին
ողջոյն շատ առ Արքայից Արքայն Արեգալինափայլ Շա-
պուհի մեծի եւ ընդհանուր ժողովրդեան իրանեան ազգի:

Ստացանք ձերդ երջանկափառ Արքայից Արքային հա-
մակը եւ պարունակութիւնն, մեծ ցաւ առթեց մեզի եւ
մեր հախարարութեան, մեր կայսեր հետ բարեկամանա-
լը երբէք դաշնակցիլ չի նշանակեր հոռովէական պետու-
թեան հետ, եւ մեր արքայական գերդաստանը եւ բո-

լոր Արմենիստանի ժողովուրդը ճանճալով իբր բարե-
րար եւ քոյր ազգ իրանի մեծ պետութիւնը կուզեն ի-
րենց խոստման համաձայն պահել դարերէ հետէ իրենց
կտակուած բարեկամութիւնը :

Հոովմէական պետութեան հակառակ ընթացք մը ու-
նենալը թէ մեր եւ թէ իրանի մեծ պետութեան վնաս-
ակար սեպեցինք . մտնաւանդ թէնոգոս անհամար գուր-
դերով եւ հզօր լէզէոններով եկած բանակած էր, Հու-
յաստանի Կապադովկիոյ սահմանին վրայ . տարբեր ըն-
թացք մը մեծ աղէտի գուռ պիտի բանար :

Ուստի մեր եւ մեր ազգին հաւատարմական հաւաս-
տիքը եւ բոլոր թիւրիմացութիւնները պարզելու համար
ղրկեցինք մեր հօրեղբօրորդին , Տիրիթ իշխանը , ինչպէս
նաեւ Վասակ սպարապետին եղբայրը . հրամանատար
Վարդանը , հանդերձ մեր փոքր նուէրներով յուսալով
որ ձերգ Արեգակնաւորայլ վեհափառութիւնը ամենայն
սիրով պիտի ընդունի մեր պատգամաւորութիւնը . կը
նուիրենք մեր անկեղծ հաւատարմքը յոսա Չերգ Արեգակ-
նաւորայլ վեհափառութեան :

Արսաշատ

Կնիք Արփայական

Շապ . — Ուրէն շուտ ամէն կողմ տեղեկացուր որ
դադրին ո եւ հալածանք քրիստոնէսներու գէմ :

Շապ . Տիրիթ եթէ ճիշտ է Արշակայ ըսածը ինչո՞ւ
ժամանակին մեզ չի տեղեկացուց :

Տիր . Վեհափառ տէր . մենք վախնալով թէ մի գու-
ցէ յանկարծակի կրնաք գալ հոովմէական լէզէոններու
դիմաց . զինուորական մեծ պատրաստութիւններով սահ-
մանները ամրացնելու զբաղած էինք որուն համար չի
կրցինք տտենին պատասխանել :

Վարդ . — Ինչէս նա եւ ես վեհ . Արքայ Կապադովկիայի
սահմանին վրայ հրամանատարի պաշտօնս ձգած զրկուե-
ցայ յոսա ձեր վեհափառութեան :

Շապ . — Բայց Արշակ արքան Ատրպատականի եւ Փայ-
տակարանի կողմերը եւս ամրացուցած է :

Տիր . — Այո, Արեգակնաւորայլ արքայ , ամէն կողմ
պէտք է մեծ պատրաստութիւն ունենանք զի Բիւզանդ-
դիոնի կեղծ քաղաքականութիւն ով գիտէ որքան ուժեր
պիտի սպառէ մեզմէ :

Շապ . — Ազրիս հանճարեղ Տիրիթ շատ ուրախ եմ
որ Հայոց ազգը խելամուտ եղած եւ գիտցած է հոով-
մայական կեղծութիւնը :

Ուրեմն քաջը իմ Տիրիթ սիրելիդ Վարդան գացէք
հաղորդեցէք Չեր թագաւորին իմ խնդակցութիւններս
ըսէք որ Հայ քաջերէ կազմուած բանակը մը զրկէ օգ-
նութեան որ միատեղ վանենք սա հասարակաց թշնամին .
արդէն մեր զօրքերը սկսած են շարժուլ մը դէպի Կա-
պադովկիա . նուիրեցէք սիրոյ ողջօյնս Հայոց Արքային
եւ Հայաստանի բոլոր ժողովուրդներուն :

(Տիրիթ եւ Վարդան խոնարհելով պետք ե մեկնին)

Շապ . — Քաջը Սուրէն, հարկ եղած իշխանական պա-
տիւր տուէք պատգամաւորներուն եւ արքայապայել ըն-
ճաներով զանոնք ճամբայ դրէք :

Գ . ՏԵՍԻԼ

Արեւի առանձինն հագած արփայական համազգեստ իր դեմ
ունենալով Կարդիկոսը

Արե . Ներկան շատ աղաթա , իսկ ապագան բոլորովին
մոռայ կ'երեւի Տիրիթի եւ Վարդանի պատգամաւորու-

Թիւնն . իսկ թէ յաջող անցնի դարձեալ գուցէ աղետաբեր ըլլայ . արդէն այս շաբթու Պարսկաստանէն եկող փայլիկը լուր բերաւ որ Շապուհ օգնութեան համար գունդ մը զօրք կ'ուզէ , որով կը հաստատուի թէ կ'ուզէ բարեկամ մ'նալ մեզ , բայց թէ բացարձակ Հայկական գունդերուն կարելի է օգնել Շապուհի հոովմայական լէգէոններու դէմ . երբ զեռմեր գաշնակցութեան պայմանագրութիւնը իսկ թաց է :

(Վահե անապարսնոփ ներս մեկեղով)

Վահ . — Մեծայաղթ Արքայ , երբ Շապուհ բազմաթիւ զօրքերով կ'ուզէր անցնիլ երթալ հոովմայեցոց դէմ ուզեց զօրքերով գիշերել Տիգրանակերտ , Անտովք իշխանը արգելեց Արքայից Արքային մուտքը . Շապուհ կատրած հրամայեց յարձակողականի իր բոլոր ճիգեր անօգուտ անցան , Պարսից զօրքը յետ քաշուեցաւ , բայց Շապուհ սպառնաց սաստկապէս լուծել իր վրէժը Տիգրանակերտցիներէ իր վերադարձին :

(Շառասպ անապարսնոփ ներս մեկեղով)

Շառ . — Վեհ . Արքայ , ահա Շապուհ վերադարձած Յունական կռիւէն յաղթական անթիւ զօրաց գլուխ անցած սկսած է յարձակիլ Տիգրակերտի վրայ :

Ա. Գունդին ինք կը հրամայէ

Գ. « Անտիկան հրամանատարը

Գ. « Հագարուխտ հրամանատարն , նմանապէս Հայկական զօրքերը եւս սպարապետը 3 մասի բաժուած է .

Ա. Գունդին ինք կը հրամայէ

Բ. « Բագոս հրամանատարը

Գ. « Բիւրատ Ռշտունին

Ա. Գնդով Արծուի մը պէս հասաւ բազմայաղթ սպարապետը այն ինչ սկսած էր Հագարուխտ սպարտակիլ Վանանդա .

ցոց աշխարհը զարկաւ փշրեց դուրս վանեց երկրէն :

Բ. Գունդով Բագոս քաջ հրամանատարը , յարձակեցաւ Անտիկանայ վրայ , անհնարին քաջագործութիւններ գործեց խնդր անուանուած Բագոս ; այն ինչ սուր սուրի եկած գիրկնդիւսան սկսած էին կռուիլ՝ զարգարուած փիլ մը տեսաւ գիւցազն Բագոսը խորհեցաւ թէ Շապուհ կը գտնուի փիլին կռնակը գտնուած վանդակափեղկի մը մէջ , ցած իջաւ երիվարէն խոյացաւ շուտով փիլին վրայ մտաւ անոր ներքեւը ու զարկաւ :

Աւաղ վեհափառ փիղը ինկաւ լեռներու բարձունքէն ինկած ժայռի մը պէս ու իր ներքեւ ճովեց անմման Բագոսը . Բագոսը մեռաւ :

Արե . — Բագոս մեռաւ . այն Բագոս . Բագոս Հայոց արքային պարծանքը եւ ազգին կեանքը դուռն մեռնէիր , քու տեղդ ես մեռնէի Բագոս .

(Չեռքը դեպի երկինք վերցնելով)

Մեւցիր դու արեւ ճիւն ճառագայթներդ ծիրան թող ներկուին , իսկ դուռն Հայոց աշխարհ սուգը թող պապէքեզ , ու տղմուտ թող վազեն քու վճիտ գետերը :

Ներս . — Ի՞նչ կ'ընես արքայ . Արշակ , Արշակունի Արշակ . եթէ Բագոս մեռաւ ողջ է Հայոց բազմայաղթ Արքան , ողջ է Վատակ անպարտելի սպարապետը , ողջ են Հայոց յաղթական զինուորները :

Գիւցազն Բագոսի եւ նահատակ զինուորներու արիւններն վրէժը կը խնդրեն քեզմէ Արշակ եւ ոչ ո՛րք , սուքը ակարներու է յատուկ , իսկ վրէժը քաջերու .

Արե . — Վրէժ ուրեմն վրժ , սուրս վահէ եւ երկվար :

(Պեճ է ներկայեչ սուրբ)

Արե . Օրհնէ Արբազան Հայր օրհնէ սուրս

(Հայրապետը ձեռները երկինք վերցնելով)

Ներս . Մեր հայրերուն Աստուածը թող հատու ընէ
Հայոց արքային եւ անոր զինւորներուն սուրբ եւ Լուսա-
ւորչի Աստուածը թող ապաւէն ըլլայ անոնց .
Քազաւոր սուր կապելով կը մեկնի

(Վարագոյրի ետեւէն զինւորները պե՛սֆ եւ երգեն)

Ե Ր Ք

1. Յառաջ Հայեր օն յառաջ
Ի ձախ ի յաջ օն յառաջ
Դրուժան Պասիկն ոխերիմ
Սպառնայ մահ մեր եկրին
 Յառաջ օն ի օն քաջեր
Արշակունի զինւորներ
Յառաջ մեզի կ'սպասեն
Մեր ընկերներն կազմիզէն
2. Բոսոր արին Բագոսի
Վրէժ կը գոռայ մեզի
Ծիրան ներկուած մեր սարեր
Զինու տան մեզ հրաւեր :
 Յառաջ օն ի օն քաջեր . . .
3. Լացող մանկիկ մեր սիրուն
Որդիք ինկած քաջերուն
Թախծոտ հարսներ սգալից
Վրէժ կ'ուզեն մերազնից
 Դէ՛հ ուրեմն իմ քաջեր . . .
Արշակունի զաւակներ
Յառաջ մեզի կ'սպասեն
Մեր ընկերներ կազմ ի զէն

Ե . ՏԵՍԻԼ

(Ներհ . Կրակաւորան առանձինն իշխահական սարագով)

Ներհ . Այս կեանքի վերջը ուր պիտի երթայ, եւ մենք
մինչեւ երբ պէտք է գտնուինք պատերազմի հախճիրուն
մէջ, 20 տարիէն աւելի է որ իմ 2000 մարտիկներու հետ
ստոյգ մահուան դէմ ընդ դէմ կը կռուինք :

Այս բոլորին ի՞նչ շահեցանք, եւ ի՞նչ պիտի շահինք
այսպիսի սպերախտ երախտամոռ Արքայէ մը : Մա ինքը
Արշակ էր որ Արշակաւանը հեմնեց, եկեղեցական կալ-
ուածներէ քանին դրաւեց, մեր հախարարական կալ-
ուածներու քառորդն իսկ չի թողնեց մեզի, միջոց մը,
միջոց մը՝ ազատելու սա ամբարիշտ Արքային ձեռքէն,
պէտք է կանչել Սիւնեաց Վրէն եւ Գնունի Շահէն իշ-
խանները :

Ներսե՛հ ժամացոյցը նայելով

Ներհ . — Այո, հիմայ իսկ պէտք է եկած ըլլայ Վե-
հափառը, իսկ դուն փայլակ կանչէ Սիւնեաց եւ Գնուն-
եաց իշխանները :

(Փայրակ կը մեկնի)

(Վեհափառը ներս կը մտնի)

Ներս . — Ողջոյն Յաղթապան՝ իշխան .

Ներհ . — Աստուած օգնական Վեհափառ : Վեհ . մարդ
զրկեցի այժմ Սիւնեաց եւ Գնունեաց իշխաններուն խոր-
հրդակցելու համար թէ ինչպէս պէտք է վարուիլ Ար-
շակայ հետ :

(Այս ասեան պէտք է ներս մտնեն երկու իշխանները բարեղէ վերջ

Ներս . Ինչպէս խօսեցայ Վեհափառին ձեզ եւս կանչած ենք որպէս զի միջոց մը խորհիւք Հայոց Արքային մասին :

Վրեճ . — Այո ճշմարիտ է Վեհ . այո՛ 20 տարի է որ սուրբնիս մերկացուցած պատերազմի արհաւիրքներով կ'ապրինք գիշեր ցորեկ իրարու խառնած , երիտասարդի թարմ հասակնիս եւ կարմիր արիւննիս զոհեցինք Հայոց Արքային սիրուն . սակայն ի փոխարինութիւն ինչ շահեցանք , թերեւս եթէ մինչեւ հիմայ կործանած չլլայինք Արշակաւանը՝ մենք ալ սպաննուած եւ աւարի տըրուած պիտի ըլլայինք մեր ծառաներէն .

Շահ . — Արշակունի եւ Հայկազուն թագաւորներու մէջ մինչեւ հիմայ չի տեսնուած ու չի լսուած բաներ է որ կրնէ Հայոց Արքան , աչքի առջեւ ունեցէք մեր հեթանոս եւ քրիստոնեայ թագաւորներու անցեալ կեանքը , եւ տեսէք թէ կա՞ր անոնց մէջ ո եւ է մէկը որ իր նախարարներուն ունեցածին աչք տնկած ըլլար եւ փոխան սրբազան տեղեաց հասոյթներն աւելցնելու յԱրքունիս գլուխ եկեղեցապատկան կալուածներէ շատերը եւ դեռ աւելին այն երիտասարդներէ օրիորդներէ շատերը , ուրոնք Աստուծոյ ուխտած էին իրենց կեանքը , իբր դատարկապարսներ արտաքսեց վանքերէն դուրս , բռնի ամուսնացուց շատերը , նախապատիւ համարեց ապրիլ աշխարհի համար քան Աստուծոյ համար . այս բարբարոս չարեաց մէջ իր հետ միաբանած ունին սպարապետը եւ Մարտապետը :

Վրեճ . — Տեսա՞ք յիշեցէք միանգամայն Արշակայ հօր Տիրանայ կոտորած կրկին նախարարութիւնները Արծրունեաց եւ Ռշտունեաց ատհմերը ըսել կուզեմ , Մարտապետի քսութիւններուն ականջ կախելով մինչեւ օրօրօցին

երախաները արու թէ էգ չարդեւ տուաւ , հազիւ Մամիկոնեաններ կրցին երկու փոքրիկ երախաներ ազատել սուրի բերնէն , Աստուծոյ նախախնամութիւնը շուտով եկաւ պատժել զինքը Շապուհի միջոցաւ , որուն երկու աչքերը հանուած այժմ կ'սպասէ հայրենի վանքերէ մէկուն մէջ :

Շապ . — Մեր նախարարներուս եւ Վեհափառին միաբանութիւնը կրնայ ասոր պէս եւ թերեւս ասկէ աւելին բերել Արշակայ գլխին : Բայ իս լաւ կ'ըլլայ չօգնենք Արշակայ թողունք զինքը առանձինն , նաեւ գաղտնի գրենք Շապուհի որ իբր բարեկամ իր քով կանչէ զայն եւ այն ատեն ամէն ի՛նչ դիւրացած կ'ըլլայ :

Ներս . — Շատ սխալած պիտի ըլլաք այդպէս վարուելով Արշակայ հետ . ինչ որ կ'ըսէք իշխանք յօժարութիւնով Հայոց Արքան Շապուհի սխերիմ թշնամուն ձեռքը տանք . իր աէրը մասնող Յուդայէ մը ի՛նչ տարբերութիւն կրնայ ունենալ մեր այս գործը , ի՛նչ կ'ըսէք 27 տարիէ ի վեր Շապուհի փափաքած երազներուն կատարումը իրագործե՞նք , վիրաւեր Հայաստանը տա՞նք արիւն կզակ վագրերու ճանկը :

Վրեճ . — Չընենք այսպէս Վեհ . բայց ի՛նչ ընենք թողունք Արշակը որ նախարարութիւնները փճացնէ եւ եկեղեցին ազքատացնէ :

Շահ . Այո կրկին սուրբուր մէջ ենք , կամ պէտք է իյնայ Արշակ թագաւորը կամ պէտք է կորսուին նախարարութիւնները :

Ներ . Նախարարութիւնները կորսուելու վտանգ չկայ , Արշակաւանի դէպքին առաջքը առնուած է իսկ եկեղեցին հոգ չէ թէ քիչ մը աղքատանայ . ազգը եւ անոր նախարարները թող ապրին սւ եկեղեցին դարձեալ կսկսի հարստանալ :

Շահ . Վեհ . դուք աւելի եկեղեցին է որ կը հոգաք

քան մեզ, եթէ ձեզ համար Արշակայ ըրածները տանելի են մեզի անհանդուրժելի չեն ըլլար, ուրեմն թողունք Արշակը իր շահատակութեան մէջ :

Ներս . — Ոչ ոչ բարի իշխաններ, այլ եւս ոչինչ վրնաս կրնայ հասցնել Արշակ, քանի որ կ'ապրի Հայոց կաթողիկոսը . ես անձամբ պարտաւոր եմ ձեզ Արշակայ յուր գործառնութեանց համար վստահ եղիք :

Վրեհ . — Մենք եւս կը մաղթենք յերկինս որ ալ եւս բարի թագաւոր մը դառցած ըլլայ ձեր յորդորներով :

Ներս . — Շնորհակալութիւններս կը յայտնեմ

(Ներսու կը մեկնի)

Վրեհ . — Գրոյիս շարժելով .

Անպիտան կղեր, եկեղեցակապատական կաշուածներուն երկու երորդը ձեռքէ հանեց իր այս ընթացքով եւ դեռ եւս կ'ուզէ որ Արշակ թագաւորէ, ոչ ոչ մեզի ալ եւս այս տեսակ Արքայ եւ ոչ ալ այսպիսի Հայրապետ պէտք է :

Շան . — Լաւ կ'ըլլայ կանչենք Մանուկեանց եւ Արմատունեաց նախարարութիւնները . որոնք մեզի կամաւ կից են, խնդիր չէ թէ օգնել չուզեր Ներսէս :

Վրեհ . — Դեռ աւելի լաւ ըրած կ'ըլլանք եթէ սպարապետը եւս մեր կողմը շահինք :

(Պեճ է փակել վարագոյրը, յիսուր երգե մը վեւջ դարձեալ բանալ)

Սպարապետ աւանձին հրամանատարի համազգեսով

մեկնախօսուրիւն

Վսկ . — Վատեր, դրուժաններ, կ'սպասեն ինձմէ որ ես ալ տիրադրուժ դառնամ . իմ նախաձոր Մանգուն իշխանի օրերէն մինչեւ հիմայ և ամիկոնեան տամ չը այդպիսիներ չէ ծնած, այս սուր 27 տարիէ ի վեր Արշակունի զինուորներու հետ ինչեր գործեց, որոնք դեռ անաղարտ կը մ'նան մինչեւ հիմայ յուշատեարիս մէջ :

(Պեճ է գրպանէն յուշատեար հանէ եւ սկսի կարդալ)

Ա. Պասզ . Մերուժան Աժուհի իր հաւաս ուրանալով գնաց Շապուհի մօտ եւ եղաւ զօրավար Պարսից բանակին ու շատ զօրեղով մտաւ Հայասան, աւերեց, քանդեց Մրջագէտ :

Ես 10000 զօրով, զարկի կոսորեցի եւ փախուցի զանոն :

Բ. Պասզ . Դարձեալ պարսիկներ Միհրի առաջնորդութեամբ յանգարձակի մտան Հայասան կրակի տուին երկրը, սպանեցին անբիւ երախաններ եւ գերի վարեցին շատեր . աւերեցին Տիգրանակերտ եւ Հայոց բազաւորներուն ոսկորներ հանեցին :

Արշակ Արեւիկն հետ զօրահանրես մը տուին եւ ընտիր 60000 քաջերու հետ հասան Պարսից բանակասեղը յԱրտաս, զարկին, կոսորեցին մազապուր եղան Շապուհ եւ Մերուժան : Եկաւ ապա Վարին զօրավար 40 բերով եւ ես 40000 քաջերով կոսորելով փախուցի զանոն, Եկաւ ապա Ս.Վրեհ Պահլաւ շատ զնդերով անբիւ փիղերով եւ ես կոսորեցի անոնցմէ շատեր :

Եկաւ Փայլիկը դարձեալ 40 բերով մտաւ Ասրպասականի ախարը եւ ես Արշամունի զինուորներով կոսորեցի զանոն, մտայ մինչեւ Դավրեժ եւ Պարսից Արեւիկն արեւիկն արեւունիք այրելով յեսս դարցայ :

Դեռ որ մէկը յիշեմ իմ ըրած պատերազմներուս, նախարարներու օգնութիւնով, հարցէք, հարցէք, Հայաստանի սարերն ուլեռներն իսկ պիտի պատասխանէ :

(Յուշատեարը մնայր դնելով)

Ո՛հ սիրտս կը ճմլուի ով կ'ըսէր այսքանի քաջ եւ անվեհեր նախարարութիւն մը պիտի իմար պիտի ստրկանար այսքան, ո՛հ Աստուած իմ Աստուած իմ թող մեռնիմ ու չտեսնեմ Արքայիս եւ Հայաստանի արեւին շիջանիլը :

(Այս միջոցիս Արշակ ներս կը մեկնի)

Արե . — Բարեւ սպարապետս .

Վսկ . Ծառայ եմ Վեհ . Արքայ գիտէք թէ այս անգամ ալ Շապուհ մեր գէմ՝ զրկած է , Ալսնոզան զօրավարը անհամար վնդերով ու փիղերով , ձեր հրամանին համաձայն դիմեցի նախարարներու որոնք ինձ մերժողական պատասխան զրկած են , մանաւանդ կ'ըսեն թէ 27 տարիներէ հետէ պատերազմի դաշտը գտնուելով ձանձրացած են եւ կ'ուզեն որ անպատճառ Հայոց Արքան հաշտուի Արքայից Արքային հետ :

Արե . — Այո՛ ես եւս նամակ ստացած եմ Ալսնոզան զօրավարէն . որն որ Շապուհի բերնով կը հրաւիրէ զիս Պարսկաստան երթալու եւ ներկայախնալու Արքայից Արքային :

Վոկ . — Ուրեմն ի՞նչ ընել կը խորհի Վեհափառ .

Արե . — Կը խորհիմ երթալ Պարսկասկան՝ կռուիլը ալ եւս աւելորդ է քանի մեր նախարարք կը լքեն զմեզ , բայց մեր սուրը եթէ դարցնենք մեր նախարարներու գէմ եղբայրսպան կռուի մը միջամուխ պիտի ըլլանք :

Վսկ . — Այո բազմալազ թ արքայ զեղբայր եղբայր կրտորելով Պարսիկները շուտով իրենց փափաքին հասած պիտի ըլլան , լաւ կ'ըլլայ որ միատեղ երթանք Պարսկաստան :

Արե . — Մեծալազ թ եւ հաւատարիմ՝ սպարապետս , ես պիտի երթամ թէեւ կը կարծեմ թէ էն սոսկալի վայրկեաններն է որ պիտի անցնեմ , աւելի կ'ընտրեմ առաւապիլ , քան հայրենիքի համար կռուող քաջերուն հետ վէճ ունենալ . բայց գուն սիրելի սպարապետ ինչո՞ւ պէտք է վտանգի ենթարկիս զքեզ :

Վսկ . — Ոչ ոչ Վեհ . Վասակ վատ չէ . Վասակ քեզ հետ ապրեցաւ մինեւ հիմայ , այլքան պատերազմի արհաւիրներու մէջ , եւ այսօր դարձեալ կ'ուզէ մինակ չթողուլ զքեզ Շապուհի արքունիքին մէջ , ամենասիրելի արքային

հետ կրած չարչարանքներս ինձի համար ուրախութիւն են եւ անոր հետ մեռնելը ինձի փառք :

Արե . — Եկուր համբուրեմ՝ ճակատդ տիրասէր եւ անձնուէր սպարապետս , բայց ըսէ՛ք ի՞նչ պիտի ըլլայ Հայոց բանակն առանց քեզ :

Վսկ . — Առիճները կորիւններ պիտի ծնին դարձեալ եւ Լուսաւորչի Աստուածը օգնական պիտի ըլլայ Հայոց ազգին :

2. ՏԵՍԻՒ

(Շապուհ ներկայել առակնիկն՝ հագած արհայական ծիրակնիկ)

Այժմ՝ Հայոց խրոխտ Արքան Արշակը կը գտնուի ձեռքերուս մէջ :

(Չեմքեր դեպի վեր վերցնելով)

Բիւր շնորհակալութիւն քեզ ով մեծդ Որմիզդ , մեծ Աստուածդ արեաց եւ քեզ Արեգակ ճշմարիտ պատկերդ Որմիզդի որ 27 տարիներու երկար պատերազմներէ վերջ այսօր իմ ձեռքս տուիր Արշակը եւ անոր սպարապետը Վասակը , որուն քաջութիւններու համբաւը Բիւզանդիոնը ու Պարսկաստանն սարսեցուց , այս՛ բիւր շնորհակալութիւն քեզ , կը խոստանամ քո տաճարի մէջ մշտափառ պահել քո կենդանի հուրը եւ քեզի համար զահուածներու ճանձերը հոտ պիտի պատէ Արեաց պայծառ երկինքը .

(Շապուռն զանգալը կը հնչեցնէ)

Ներսէն կը ներկայանայ

Շապ. — Ներսէ՛՛հ Մոգպետին պատուի՛ ածին պէս կարգադրեցիք ամէն ինչ :

Ներ. — Այո մեծայաղթ արքայ, սենեակին մէկ կողմը փռեցինք Հայաստանի հողը ու ջրեցինք զայն Հայոց ազբիւրի ջուրերով. իսկ միւս կողմը Պարսկաստանի հողը ու ջուրը սփռեցինք :

Շապ. — Ուրեմն ներս բերէք Արշակը :

(Արշակ իր արխայական համազգեստով պէս է ներս բերել)

Արշակ պէս է խոնարհեցնոյ բարեւել

Շապուռն Արշակայ քեզ ւնկեղով պէս է սանի սենեակին այն կողմը ուր փռուած է պարսկական հողը

Շապ. Արշակ գուն որ երբեմն ինձ այնքան բարեկամ էիր ու իմ թշնամիներս ոտքիս տակ կը կոխտակիր. ըսէ ինչո՛ւ ինձ թշնամի դարցար, ես որ քեզ զակիս պէս կը սիրէի եւ ուզեցի աղջիկս քեզ կնուծեան տալ, իսկ գուն անարգեցիր զիս, եւ ահա 30 տարիէ ի վեր կը կոռլիս հետս :

Արշ. — Այո, Մեծայաղթ Արքայ, մեղայ ու յանցանք գործեցի քու առջեւ, իրաւ է որ թշնամիներդ ոտնակոխ ըրի եւ կ'սպասէի քեզնէ մեծ վարձատրութեան մը, բայց իմ թշնամիներս զիս խաբեցին ու կասկած ձգեցին ներսս քեզի մասին, եւ ես այն օրէն փակչելով քեզմէ սկսայ պատերազմիլ քու դէմ, սակայն այն երգումը որ երգւայ քեզի նս զիս հոս քու ոտքիդ առջեւ բերաւ. ահաւասիկ քու ձեռքդ եմ, ըրէ այնպէս ինչ պէս որ կը հաճիս :

Շապ. Արշակը պէս է սանի Հայասանի հողին վրայ.

Արշ. — Հեռու կեցիր ինձմէ չարագործ ծառայ որ ահիրաւութիւնով տէր դարցար քու տէրէրուդ ժառանգութեանը, այլ եւս պիտի չի թողում ոչ քեզի եւ ոչ քու զաւակներուդ, Արաւան՝ թագաւորին մահուան վրէժը պէտք է հատուցանես, դուք ծառայ էիք Պարթեւագուն ներսու, հիմայ յափշտակած էք մեր իշխանութիւնը, պէտք է մեր գահը մեզի գառնէք դարձեալ :

(Շապուռն Արշակի քեզ ւնկեղով պէս է սանի Պարսից հողին վրայ)

Արշակ իշխարով Շապուռնի ոտքը

Արշ. — Ո՛հ Տէր Արքայ, ներէ ինձի, որովհետեւ չի գիտեմ ինչ կը գործեմ :

(Այս միջոցին պէս է սեղան պատրաստ եղ վրան դրուած զինի) Արշակը պէս է նսի Հայոց նողին վրայ

Արշակ մեկ քանի գաւար խմել է վերջ

Արշ. — Հիմայ այդ տեղը որ բազմեր ես Շապուռն ոտքի ել եւ թող որ ես բազմիմ, որովհետեւ այդ եղած է իմ ազգակամներու տեղը, իսկ թէ չելլես երբ հասնիմ իմ աշխարհ. խտապունս վրէժ պիտի լուծեմ քեզնէ :

(Ահա այն ասէն Շապուռն դառնալով Ներսէնի պիտի ըսէ)

Շապ. — Ներսէ՛՛հ պնայէք բերէք մահապարտի յատուկ շղթաները :

(Ու դառնալով Արշակայ)

Շապ. Արշակ քեզի պէս ամբարտաւան ու ապերախտ թագաւոր մը վայել չէ Արեգակի մեծ Աստուծոյն լուսին եւ փառաց, ձեր տեղը եւ գահը Անուշ բերդն է միայն :

(Շղթայուած պէսք է դուրս հանեն Արշակը)

Շապ. — Ներսէ՛հ բերէք Վասակ սպարապետը եւ՝ Հայոց թագաւորը առանց իր սպարապետին չէ կարելի կենալ :

(Վասակ ներկայացնել իր զինւորի հաւնազգեստով)

Շապ. — Աղուէս դու էի՛ր որ մեզ այոքան հեղու- թիւն կուտայիր, դու էի՛ր որ այոքան բազմաթիւ սար- սիկներու արիւն թափեցիր, հիմայ ես ալ քու արիւնդ պիտի թամսմ՝, մասնելով գրեց աղուէսի մահուան :

Վսկ. — Հիմա զիս փոքր անձով եւ կարճ հասակով տեսար, որուն համար պզտիկ կարծել կուզես, իբր թէ իմ մեծութեանս փորձը չես կրած. ես միջեւ հիմայ քեզ համար առիւծ էի, եւ հիմայ աղուէ՞ս եղայ : Երբ Վասակ էի, աջ ոտքս լեռան մէկուն վրայ կեցած էր, ձախ ոտքս միւսին լեռան վրայ, երբ ես դէպի աջ ոտքս յենուի աջ լեռը դէպի գետին կը տանէի. երբ դէպի ձախ ոտքս յենուի միւսը լեռը միջեւ յատակը կիչնէր եւ հիմայ դուն բաց դաշտի եւ արքունիքիդ մէջ է որ կը խօսիս :

Շապ. -- Օ՛հ ուրեմն դիտցուր ինձ Վասակ թէ ով ես այդ լեռները :

Վսկ. Լեռներէն միւն դուն էիր եւ միւսը Յոյներու կայսրը, երբ հայրապետին օրհնութիւնը իմ հետս էր,

իմ ոտքերս հաստատուն էին, բայց հիմայ մենք անկէ զրկուեցանք եւ ինկանք խորխորաախ մէջ, արդ ինչպէ՞ս որ կ'ուզես այնպէս ըրէ :

(Վարազաւրը պէսք է իջեցնել)
Պէսք է երգել ժողովուրդի արգ

ՏԵՍԻՒ Է.

Ներկայացնել մուք բանս մը եւ կուրցած աչքերով Արեակը բանսին պատեն կախուած մէկը յանձին Վասակ Մամիկոնեի

Արե. — Ո՛հ այս ինչ կեանք էր Աստուած իմ Հայաս- տանի երկնաբերձ լեռները եւ անդհդախտու ձորերը ինձ համար էին, ինձ համար էին Արարատի հսկայ բարձ- րունքները եւ Եփրատի զուարճալի սահմանքները, ինչ- յու պէտք էր խաբուէի Շապուհի սուտ երգումներուն :

Ամբողջ 30 տարի անմամն սպարապետիս առաջնոր- դութիւնով, Պարսից անհամար կռիւներուն մէջ միշտ յաղթական եղած, եւ այսօր ո՛հ սա հկուղին մէջ, սա բանախն խորը առանց աչքի լոյսի :

(Բանսապասներէն մէկը ներս մտնողով)

Բանս. — Հայոց թագաւոր մէկը քեզ տեսնել կը փա փաքի :

Արե. — Ո՛հ անսիրտ թշուառականներ եւ անգութ Աստուած բաւական չէ իմ կրած տառապանքներս եւ դեռ պէտք է սա անհաւատ պահապաններուն ձեռք խաղալիք դառնամ :

Դրասանաս ականց դեղով

Դրաս . — Ես եմ վեհ . Հայր , կրնա՞ք արեօք ճանհնալ զիս , ձեր ներքինապետը ձեր ծառան Դրաստամասն եմ :

Արե . — Ինչ է կը լսեմ իրականութիւն թէ երազ : Ո՞վ էք դուք :

Դրաս . — Ձեր ծառան Դրաստամասն եմ .

Արշակ Դրասանաս հաւատարիմ ծառայ իմ հոս միասին իրարու փարեղու եւ հաւերուեղու եմ :

Արե . — Ամենահաւատարիմ Դրասամաս առանց կեանքէդ զրկուելու ի՞նչպէս մտար հոս :

Դրաս . — Ձեր բանտարկուելէ վերջ պարսկական զօրաց վրայ հրամանատար կարգուեցայ , Բուշանաց դէմ սաստիկ պատերազմ ունեցանք , կուռն մէջ ճապուհ ամէն կողմանէ պաշարուեցաւ , իմ օգնութիւնովս հազիւ կրցաւ ազատիլ , պատերազմէն վերջ ճապուհ ուղեց ինձ մեծ շնորհ մը ընել , եւ ես յայտնեցի իրեն թէ ամէնամեծ շնորհ մը ինձի այն է թէ թող տրուի ինձ տեսնել իմ ամենասիրելի թագաւորս :

Արե . — Ո՞հ , սրբան ազնիւ էք սիրելի Դրասամաս :

Դրաս . — Ահա ամենայն ինչ բերած եմ միատեղ մաքուր հագուստներ . հոտուէս իւր եւ պտուղներ :

(Պե՛տ է սեղան զարդարեղ եւ միակգանայն Արշակիև հագցնեղ արհայտական ծիրանիև)

Արե . — Հայաստանէն ի՞նչ լուր ունիք :

Դրաս . — Ձեր վեհ . եւ միանգամայն անպարտելի սպարապետին գլխուն եկած աղէտը երբ լսեցինք քու զօրքերը եւ հաւատարիմ մնացած հախարարները . անհնարին դաննութիւնով լցուեցան . վրէժ վրէժ կոչելով անմի-

ջապէս Մուշեղը վասակ սպարապետի որդին ընդհանուր սպարապետ կարգեցին եւ անմիջական խուժեցին Պարսկական զուգերու վրայ , բիւրաւորներ ինկան կռիւ մէջ ձեռք ձգուած գերիներէ շատերը . Արջակ Հայոց թագաւորը քեզի կը հուիրենք այս գոհը ըսելով մորթուեցան . իսկ մեծամեծներէ եւ Պարսիկ հախարարներէ շատերը , որոնք բնուեցան կուռն մէջ , մորթաղերձ ընելով խոտերով լցուած կախուեցան Արատաշատու բերդերն . ի վրէժ ինդրութիւն վասակայ սպարապետի մորթաղերձ ըլլալուն :

Արե . Ո՞հ , Աստուած իմ՝ բիւր շնորհակալութիւն ինչեր կը լսեմ :

Դրաս . — Դեռ եւս Ներսէս կաթողիկոս հաւատարիմ հախարարներու հետ միաբանած ձեր որդին հորատի Պապը հետը Պոլիս կայսեր տարած է Հայոց վրայ թագաւոր պսակել տալու համար :

Կայսրը հաւանած է եւ մօտ օրերէն կ'սպասեն Հայաստան հռովմէականօգնութիւնով :

Արե . — Փառք քեզ Աստուած փառք քեզ , գնա ըսէ Հայոց ժողովրդին թէ գոհ սրտով կը մեռնի իրենց թագաւորը քանի կապրի Հայաստան . յաւէտ ապրի Հայաստան : Կ'ըսէ սուրը կը միտ կողը եւ կիցայ :



Վ Ր Ի ՈՒ Ա Կ

Էջ	սույ	Սխալ	ճիշակ
5	26	Տգնուիցի	գսնուիցի
11	28	Այր ու կին	այրուծին
12	28	Արեւմուտաբէն	արեւմուտեհն
14	4	Անորեհուքիւն	անորքուքիւն
14	17	Գնայ	գնայ
14	27	Մեհասան	մեհասաները
14	34	Պեհե	
15	14	Պեհե մը վերջ	պատիժեն
15	29	Սիրլի	
16	2	Երդեցանի	երդեցանի
16	9	Յում	յուման
46	19	Տասցած	դասցած
16	29	Սլիմ	Ոլիմ
17	18	Բարեկամութիւնը	բարեկամութիւնը
18	17	Սպասաւորը	սպարապետը
29	19	Մարի	
20	15	Մեծ	
24	23	Գ.	Բ.
25	27	Վրեժ վրժ.	վրեժ վրեժ
31	22	Ճեպ	գրպանը

2073



Գինն է՝ 60 փարսյ